ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-5

ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/8 (ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8) ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի՝ քարթրիջների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 26.01.2016թ. N 1/12-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 15.02.2016թ. ժամը 11-00-ին, ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Մարդոյանը, Կ.Սիրունյանը, Ա.Մկրդումյանը, Վ.Մկրտչյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Գների նվազեցման նպատակով բանակցությունների անցկացման մասին
և հայտերի գնահատման մասին

-ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/8 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ հանձնաժողովը ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/8 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի 10-րդ և 11-րդ չափաբաժինների գների նվազեցման նպատակով բանակցություններին մասնակցելու համար 10-րդ և 11-րդ չափաբաժինների համար գնային առաջարկ ներկայացրած և հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած «Սմարթլայն» ՍՊԸ-ին 09.02.2016թ. գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով հրավիրել էր 15.02.2016թ. ժամը 11-00-ին մասնակցելու բանակցություններին: 15.02.2016թ. ժամը 11-00-ի դրությամբ «Սմարթլայն» ՍՊԸ-ի ներկայացուցիչը չի ներկայացել մասնակցելու բանակցություններին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/8 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի 10-րդ և 11-րդ չափաբաժինները ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, իսկ 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 13-րդ և 14-րդ չափաբաժինները ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն հայտարարել չկայացած:
2. ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/8 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի՝

-«Տոնէքս» ՍՊԸ-ին 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 20-րդ չափաբաժիններով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

-«Նորման-պլյուս» ՍՊԸ-ին 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 20-րդ չափաբաժիններով ճանաչել երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից:

-«Սմարթլայն» ՍՊԸ-ին 12-րդ չափաբաժնով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

-«Նորման-պլյուս» ՍՊԸ-ին 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժիններով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

-«Սմարթլայն» ՍՊԸ-ին 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժիններով ճանաչել երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից:

3. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև

«Տոնէքս» ՍՊԸ-ին և «Նորման-պլյուս» ՍՊԸ-ին որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողների հաշվառման համարները:

4.Ոչ ավտոմատ եղանակով ծանուցել հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին՝ «Տոնէքս» ՍՊԸ-ին, «Նորման-պլյուս» ՍՊԸ-ին և «Սմարթլայն» ՍՊԸ-ին առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը;

Միաժամանակ «Տոնէքս» ՍՊԸ-ին և «Նորման-պլյուս» ՍՊԸ-ին առաջարկել 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել նաև լրացուցիչ հիմնավորումներ «Տոնէքս» ՍՊԸ-ին՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ և 20-րդ չափաբաժիններով և «Նորման-պլյուս» ՍՊԸ-ին 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժիններով ներկայացված ապրանքների գնային առաջարկների վերաբերյալ, քանի որ համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշման 47-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջների՝ ներկայացված գնային առաջարկները համարվել են չհիմնավորված ցածր:

Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյան

Անդամներ՝ Ա.Մարդոյան

Կ.Սիրունյան

Ա.Մկրտումյան

Վ.Մկրտչյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/8 (ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8) ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի՝ քարթրիջների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 26.01.2016թ. N 1/12-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.02.2016թ. ժամը 10-00-ին, ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Մարդոյանը, Կ.Սիրունյանը, Ա.Մկրդումյանը, Վ.Մկրտչյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի ուսումնասիրության և գնահատման մասին

Հաշվի առնելով, որ «Սմարթլայն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում տեղ գտած անհամապատասխանությունները և էլեկտրոնային եղանակով ներկայացրել է հրավերով պահանջվող Հավելված-3.6-ը (կցվում է)՝ հանձնաժողովը որոշեց՝

-«Սմարթլայն» ՍՊԸ-ին, «Նորման-պլյուս» ՍՊԸ-ին և «Տոնէքս» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներ:

-Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով մասնակիցների կողմից հայտերով ներկայացրած գնային առաջարկները արձանագրեց, որ 10-րդ և 11-րդ չափաբաժինների համար «Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գները գերազանցում են ՀՀ ֆինանսների նախարարության 2016 թվականի գնումների պլանով հաստատված նախահաշվային գները, հանձնաժողովը որոշեց՝

-նիստը կասեցնել՝ 10-րդ և 11-րդ չափաբաժինների համար հայտով գնային առաջարկ ներկայացրած և բավարար գնահատված «Սմարթլայն» ՍՊԸ-ին հրավիրել գների նվազեցման համար միաժամանակյա բանակցությունների:

-նիստը վերսկսել՝ 2016 թվականի փետրվարի 15-ին, ժամը 11:00-ին և գների նվազեցման համար միաժամանակյա բանակցությունները կազմակերպել ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյան

Անդամներ՝ Ա.Մարդոյան

Կ.Սիրունյան

Ա.Մկրդումյան

Վ.Մկրտչյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/8 (ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8) ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի՝ քարթրիջների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 26.01.2016թ. N 1/12-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 09.02.2016թ. ժամը 16-00-ին, ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Մարդոյանը, Կ.Սիրունյանը, Ա.Մկրդումյանը, Վ.Մկրտչյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/8 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/8 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «Սմարթլայն» ՍՊԸ-ն (ք. Երևան, Վարդանանց 110)

2. «Նորման-պլյուս» ՍՊԸ-ն (ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60)

3. «Տոնէքս» ՍՊԸ-ն (ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղ.,45 շ.,42 բն.)

-ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/8 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին (ARMEPS) համակարգի միջոցով հայտ չեն ներկայացրել համակարգում 09.02.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

-«Սմարթլայն» ՍՊԸ-ի, «Նորման-պլյուս» ՍՊԸ-ի և «Տոնէքս» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերը էլեկտրոնային (ARMEPS) համակարգի կողմից դիտվել է որպես (պիտանի) հայտեր:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

-«Նորման-պլյուս» ՍՊԸ-ի և «Տոնէքս» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:
-«Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացրած հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը պիտանելիության չափորոշիչը, տեխնիկական չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան, սակայն բացակայում է Հավելված-3.6-ը:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ		
		''Սմարթլայն'' ՍՊԸ	''Նորմա-պլյուս'' ՍՊԸ	''Տոնէքս'' ՍՊԸ
1	Քարթրիջ HP 12 A կամ համարժեքը	19866667	4200000	2240000
2	Քարթրիջ HP 85 A կամ համարժեքը	7450000	1575000	870000

3	Քարթրիջ HP 55 A կամ համարժեքը	7550000	1575000	870000
4	Քարթրիջ Samsung MLT-D111S) կամ համարժեքը	-	-	-
5	Քարթրիջ Lexmark 60F5000 կամ համարժեքը	-	-	-
6	Քարթրիջ Xerox 106R02181 կամ համարժեքը	-	-	-
7	Քարթրիջ HP 78A կամ համարժեքը	1270833	300000	145000
8	Քարթրիջ Dell MW558) կամ համարժեքը	-	-	-
9	Քարթրիջ Dell UD314) կամ համարժեքը	-	-	-
10	Քարթրիջ HP 90 A կամ համարժեքը	733333	-	-
11	Քարթրիջ HP 36 A կամ համարժեքը	475000	-	-
12	Քարթրիջ HP 96 A կամ համարժեքը	362500	-	-
13	Քարթրիջ Xerox phaser 108R00909 կամ համարժեքը	-	-	-
14	Քարթրիջ Samsung MLT-D109S (կամ համարժեքը	-	-	-
15	Քարթրիջ HP CB540A (black) (կամ համարժեքը	172917	50000	-
16	Քարթրիջ HP CB541A (cyan) կամ համարժեքը	172917	50000	-
17	Քարթրիջ HP CB543A (magenta)) կամ համարժեքը	172917	50000	-
18	Քարթրիջ HP CB542A (yellow) կամ համարժեքը	172917	50000	-
19	Քարթրիջ Samsung MLT-D101S կամ համարժեքը	312500	125000	-
20	Քարթրիջ HP 05 կամ համարժեքը	1562500	300000	180000

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշման 45-րդ կետի՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:
ՀՀ-ՖՆ-ՇՀԱՊՁԲ-16-1-15/8 ծածկագրով գնահատող հանձնաժողովի որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2016թ. փետրվարի 11-ին, ժամը 10:00-ին, ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Մ. Ադամյան-1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյան

Անդամներ՝ Ա.Մարդոյան

Կ.Սիրունյան

Ա.Մկրտումյան

Վ.Մկրտչյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան